

## ՉԱԼԹԸՐԻ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՅԵՐԻ ԲԱՐԲԱՌԸ ՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԸ

**Մուտք:** Ռուսաստանի Դաշնության Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանի Չալթըր<sup>261</sup>, ինչպես նաև շրջակա Մեծ Սալա, Սուլթան Սալա, Նիսվիթա (ներկայումս Նեսվետայ), Թոփտի գյուղերում հայերը հաստատվել են 1779 թվականից՝ Ղրիմից վերաբնակեցվելով Եկատերինա Երկրորդ կայսրուհու հրամանով:

Նոր բնակավայրերում հայերը ունեցել են տնտեսական, մշակութային ձեռքբերումներ, կառուցել հողևոր ու մշակութային կենտրոններ: Ապրելով համեմատաբար կոմպակտ հայահոծ բնակավայրերում՝ հայկական համայնքն այստեղ պահպանել է մշակութային և լեզվական որոշակի ինքնուրույնություն: Սույն հոդվածը նվիրված է Չալթրի և շրջակայքի հայերի ներկայիս մշակութային ձեռնարկներին, առանձին քննության թեմա է հատկապես տեղի հայերի (գրականության մեջ հանդիպում է նաև դոնահայեր տերմինը) բարբառը: Հայերենի բարբառագիտության համար այն կարևոր է հատկապես նրանով, որ պատկանում է արևմտահայ ԿԸ ճյուղին՝ մեր օրերում քիչ պահպանված բարբառների թվին: Բարբառային փաստերը ընդունված գիտական ծրագրով քարտագրվել են տեղում՝ Չալթըր գյուղում, Մարիանա Բոցինյանի կողմից, դրանք համեմատել ենք Նոր Նախիջևանի բարբառի 20-րդ դարի սկզբների տվյալների հետ (Հ. Աճառյանի նկարագրությամբ): Տվյալները հավաքելիս զգալի օժանդակություն են ցուցաբերել ծնունդով չալթըրցի, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի շրջանավարտ, ներկայումս Մյասնիկյանի շրջանի պատմաագագրական թանգարանի գիտաշխատող Ռսկեհատ Դոլբբայան-Հայպարյանը, Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ձեռնարանի մագիստրոս Մյուռն սարկավազ Հայպարյանը, որոնց հեղինակները հայտնում են իրենց խորին շնորհակալությունը:

**1. Պատմությունը:** Մյասնիկյանի շրջանը, որպես վարչական միավոր, ձևավորվել է 1926 թ., կենտրոնն է Չալթըր բնակավայրը: Իսկ մինչ այդ անցել է պատմական հետևյալ ուղին<sup>262</sup>:

<sup>261</sup> Գյուղի անվան համար գործածվում են նաև Չալդըր, Չալդիր, Չալտըր և այլ հնչյունական տարբերակները, գյուղ մտնող ցուցանակին գրված է Չալթր: Մենք գործածում ենք Չալթըր ձևը, որ շատ է հանդիպում գրավոր աղբյուրներում և առավել մոտ է արտասանությանը:

<sup>262</sup> Համայնքի կազմավորման և պատմության մասին տե՛ս նաև Սիլիկ, Նոր Նախիջևանի հիմնարկության պատմութիւնը, Թիֆլիս, 1879: Շահագիգ Ե., Նոր Նա-

1768-74 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում՝ 1771 թ., սկսում է Ղրիմի նոր արշավանքը: 1772 թ. հունիսի 29-ին ռուսական զորքը կարողանում է գրոհով գրավել հռչակավոր Կաֆան, որից հետո թերակղզու մեծ մասը անձնատուր է լինում, իսկ 1774 թ. Քյուչուք Կայնարջիքի պայմանագրով Ղրիմը դուրս է գալիս Օսմանյան գերիշխանությունից, 1779 թ. ամբողջովին անցնում Ռուսաստանին: Այս բոլոր ձեռնարկներում ռուսներին աջակից են դառնում տեղի հայերը, մանավանդ՝ Ռուսաստանի հայոց առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Երկայնաբազուկ Արղությանի հորդորներով:

Հովսեփ արքեպիսկոպոսի և զորավար Պոտյոմկինի տեղապահ կոմս Ռազումոսկու նախաձեռնությամբ ստացվում է ղրիմահայերին տեղահանելու և Նոր-Նախիջևանում նրանց համար նոր բնակավայր հիմնելու հրովարտակը: Հայերի գաղթը կազմակերպվում է Ա. Սուվորովի անմիջական գլխավորությամբ<sup>263</sup>: Ի դեպ՝ ռուսերեն և հայերեն գրված շքեղադրոշմ այդ հրովարտակը պահպանվում է ՀՀ պատմության պետական թանգարանում:

Հայերն իրենք են ընտրում Ղոն գետի հյուսիսային մասերում Պոլուտեննիկ կղզին, նրա մոտ սփռված տարածքները, հատկապես՝ անուշահամ ջրերի, գետի ձկների առատության համար: Հայերին է շնորհվում նաև Ղոն գետի մի հատվածը ձկնորսության համար և մեծ հողատարածքներ Նիսվիթա, Սալու և Սամբել գետերի միջև:

Ղրիմի հայերը ինքնակամ չեն դուրս եկել իրենց հարյուրամյա բնակավայրերից: Պահպանվել են որոշակի փաստեր ընդդիմանալու, իրենց բնակավայրերում մնալու ցանկության մասին: Մեծ զրկանքներով ու կորուստներով երեք գաղթական հոսանքները հասնում են Ղոն գետի աջակողմյան բացավայրը, այստեղ Հովսեփ Արղությանը պաշտոնական արարողությամբ, հեծելազորով, համազարկերով հռչակում և կատարում է Նոր Նախիջևան քաղաքի և նրա 5 գյուղերի հիմնարկությունը:

Գիտական գրականության մեջ 19-րդ դարի վերջից մի վարկած է շրջանառվում, ըստ որի՝ Ղրիմի հայերի նախնիները սերում են քաղաքամայր Անիից: Ղրիմահայերի՝ Անիից և Շիրակից գաղթած լինելը ունի բանահյուսական ու նաև մատենագրական վկայություն: Ղրիմը Ռուսաստանին միացրած Եկատերինա կայսրուհու հրահանգով գրված պատմության հեղինակ Բոգուշ Սեստրենցևիչը, որոշակիորեն օգտվելով նաև Հովսեփ Երկայնաբազուկ Արղությանի տվյալներից,

---

խիջևանը և նորնախիջևանցիք, Թիֆլիս, 1903: Գ. Պատկանեան, Նոր Նախիջևանի պատմությունը, Նոր Նախիջևան, 1917: Վ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917), Ե., 1985:

<sup>263</sup> Присоединение Крыма к России, сост. Дуброван Н., т. 2, СПб., 1885, стр. 652:

նշում է, որ հայերը Ղրիմ են գաղթել Անիից 1330 թ.: Թեև ապացուցված է, որ հայերի հեռաբերը Ղրիմում հասնում են մինչև 10-րդ և ավելի վաղ դարերը, սակայն դա չի ժխտում Անիից ավելի ուշ շրջանի մեծ գաղթի իրական լինելը: 1331 թ. Ղրիմից հայերի մեծ հոսք է եղել դեպի Լեհաստան (Կամենից, Լվով, Գալիցիա):

Մենք առիթ ենք ունեցել անեցիների «մեծ գաղթի» մասին բանահյուսական և պատմական այս փաստերը «հազեցնել» լեզվական տվյալներով: Անիի վիճագիր արձանագրությունների և Նոր Նախիջևանի խոսվածքների համեմատությունը բերում է այն եզրակացության, որ Նոր Նախիջևանի բարբառը չի պահպանել այնպիսի գծեր ու փաստեր, որոնք բնորոշ լինեին միայն Անիի տարածքին: Այդ իսկ պատճառով խիստ հեռավոր աղերս կարելի է նկատել Անիի վիճագրերի և ղրիմահայերի խոսածքների միջև, այդ փաստերն այնքան ստվարաթիվ չեն, որոնց միջոցով հնարավոր լիներ ուղղակի կապ նկատել անեցիների ու ղրիմահայերի միջև<sup>264</sup>:

Այսպիսով՝ Նոր Նախիջևանի, Չալթըրի և շրջակա բնակավայրերի հայերը ներգաղթել են Ղրիմից: Ղրիմը ողջ միջնադարում եղել է հայահոծ թերակղզի, ըստ որոշ տվյալների՝ քաղաքների մի մասում հայերի ներկայությունը 17-րդ դարում հասել էր 40, անգամ 70 տոկոսի: Այստեղ ստեղծվել են հայ մշակույթի, դպրության ոչ քիչ արժեքներ:

Վերաբնակեցվելով Ղոնի շրջաններում՝ կարճ ժամանակ անց հայերը տեղի ամայի վայրերը շենացնում են, զբաղեցնում գրեթե ողջ հարավային Ռուսաստանի տոնավաճառները: Ջբաղվում էին հատկապես արծաթագործությամբ, ասեղնագործությամբ, կաշեգործությամբ: Ըստ վկայությունների՝ քաղաքում աղքատ հայ չկար: Ռուսական իշխանությունը վերաբնակներին տալիս է մի քանի արտոնություն, այդ թվում՝ ժողովուրդը 10 տարով ազատվում է հարկերից, հիմնվում են քաղաքային խորհրդարան, հայկական դատարան<sup>265</sup>, ուր պաշտոնյաներն ընտրվում էին հայերից: Հովսեփ արք. Արղությանը հիմնում է հոգևոր դատարան 126 հողվածներ պարունակող կանոնադրությամբ, որով կառավարվում էին հայոց եկեղեցիները մինչև 1836 թ. հայտնի «Պոլոժենի»-ի ի հայտ գալը:

Շատ չանցած՝ արդեն 1795 թ. բացվում են Սահակյան և Մեսրոպյան դպրոցները: Ի դեպ կրթական հարցերին հետագայում

---

<sup>264</sup> Տե՛ս Նորայր Պողոսյան, Անդրադարձ Անիի վիճագրերի լեզվին, «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» միջազգային գիտական նստաշրջանի զեկուցումների դրույթներ, Գյումրի, 2013, էջ 43-44:

<sup>265</sup> Նոր Նախիջևանում մշակված դատաստանագիրքը կիրառվել է նաև այլ բնակավայրերում՝ Աստրախանում, Ղզլարում, Մոզդոկում: Տե՛ս Ֆ. Պողոսյան, Ղատաստանագիրք Աստրախանի հայոց, Ե., 1967:

ուղղակիորեն առնչվել է նաև Միքայել Նալբանդյանը, որը հնդկահայերի, հատկապես՝ Մասեի Բաբաջանյանի նվիրատվություններով կուտակած մեծ գումարների կեսը կարողացավ 1866 թ. բերել տալ Նոր Նախիջևան:

Վիճակագրության ոչ ստույգ թվերով 1810-ական թվականներին Նոր Նախիջևանն իր շրջակա 5 գյուղերով՝ Չալթըր, Թոփտի, Մեծ Սալա, Փոքր (կամ Սուլթան) Սալա, Նիսվիթա (կամ Ս. Կարապետ) ուներ մոտ 11.000 հայ բնակիչ, 19-րդ դարի վերջերին՝ մոտ 29.000 բնակիչ: «Դոնի հայությունն իր տնտեսական և իրավաքաղաքական արտոնությունները պահպանելու նպատակով ամեն կերպ խոչընդոտել է դրսի բնակչության ներթափանցմանը: Գաղութի այդ ներփակ, գոց կյանքը էական նշանակություն է ունեցել ժողովրդի բարքերը, ազգային սովորություններն ու դիմապատկերը պահպանելու գործում»<sup>266</sup>: Իսկ այսօր Մյասնիկյանի շրջանն ունի մոտ 40 հազար հայ բնակիչ, որի մեծագույն մասը հայեր են, միայն Չալդըրում ապրում է 19 հազար մարդ, գերազանցապես հայեր<sup>267</sup>: Պատմական նման ուղի անցած համայնքը շարունակում է կենսունակ մնալ և մշակութային ու լեզվական զարգացում ապրել նաև այսօր:

**2. Մշակութային կյանքը**<sup>268</sup>: Խիստ բազմազան, կենսունակ ու նպատակասլաց է հայկական բնակավայրերի մշակութային կյանքը թե՛ նախկինում և թե՛ մեր օրերում: Դոնի հայերը, պահպանելով անցյալի ազգային ավանդույթները, նոր տեղում ստեղծել են իրենց ինքնատիպ մշակույթը: Նախկին սերունդների մեծագույն վաստակից մեկն է այն, որ նրանք պահպանել և մեզ են հասցրել ժողովրդական բանահյուսության շատ թանկարժեք նմուշներ: Տեղի բանահավաքների՝ Շահեն Շահինյանի, Խաչերես Փորթեյանի, Սկրտիչ կուլեջյանի, Հայկ Սողոմոնյանի ջանքերով կազմվել և հրատարակվել են Դոնի հայերի բանահյուսության և երաժշտական ստեղծագործությունների մի շարք ժողովածուներ<sup>269</sup>: Հարյուրամյակներով ապրելով Դրիմում, ապա ավելի քան երկու հարյուր տարի՝ ռուսալեզու բնակչության մեջ՝ հայկական այս գաղթօջախը չի մոռացել թե՛ իր լեզուն, թե՛ երգ-երաժշտությունը, ծեսն ու սովորույթները: Բազմաժանր է ժողովրդական բանահյուսությունը. այն ընդգրկում է հեքիաթներ,

<sup>266</sup> «Հայ գաղթաշխարհի պատմություն», հ, 1, Ե., 2002, էջ 432:

<sup>267</sup> <http://www.donland.ru/Default.aspx?pageid=77258>

<sup>268</sup> Այս բաժնի տվյալները, ջանադրաբար կազմած և մանրամասնորեն շարադրված, հեղինակներին է փոխանցել Մյասնիկյանի շրջանի պատմա-ազգագրական թանգարանի գիտաշխատող Ոսկեհատ Դոլբայան-Հայապոյանը:

<sup>269</sup> Բանահյուսության վերաբերյալ տե՛ս օրինակ՝ Խաչերես Փորթեյան, Նոր Նախիջևանի ժողովրդական բանահյուսությունը, Ե., 1965: Շահեն Շահինյան, Նոր Նախիջևանի բարբառի դարձվածաբանական բառարան, Դոնի Ռոստով, 2011:

երգեր, առածներ ու ասացվածքներ, հանելուկներ, ասույթներ ու ծիսային բանաստեղծություններ:

Շրջանում ներկայումս գործուն են մշակութային մի շարք հաստատություններ, որտեղ պահպանվում են ավանդական ժողովրդական արիեստները՝ գորգագործությունը, ծղոտագործությունը և այլն, ստեղծվում են ժողովրդական երաժշտական գործիքներ՝ դիոլ, գուռնա, դավալ, դուդուկ:

Երաժշտական ավանդույթները շարունակում են պահպանվել և զարգանալ երաժշտական և պարային համույթների գործունեության շնորհիվ: Իրենց գործունեությամբ աչքի են ընկնում «Անի», «Դավուլ-գուռնա», «Ծիծեռնակ», «Ջանգեր» երաժշտական խմբերը, «Աղբյուր», «Հուսո աստղ» երգի և պարի թատրոնը, «Արաքս», «Ասսա» (գեղ. Ղեկավար Ալբերտ Բաղաջիյան), «Շանս» (գեղ. ղեկ Կարինա Բատիգյան), «Հայոց աղջիկներ» (գեղ. ղեկավար Սիլվա Պոչիկյան) և այլ պարային համույթներ:

«Անի» համայնքային անսամբլը ստեղծվել է 1985 թվականին Ռոստովի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Գրիգոր Խուրդայանի ջանքերով, որը նաև համույթի առաջին գեղարվեստական ղեկավարն էր: Այժմ համույթի գեղարվեստական ղեկավարն ու խմբավարը համառուսաստանյան երաժշտական միության վաստակավոր գործիչ Գրիգորի Խաթլամաջյանն է, երգավարը՝ Վարսենիկ Բայանը: «Անի» համույթը ելույթ է ունեցել Ռոստովի մարզի տարբեր քաղաքներում, Ղրիմում, Մոսկվայում, Սլովակիայում, Երևանում, Արտաշատում, Իջևանում և մի շարք այլ վայրերում՝ դառնալով տարբեր փառատոնների դափնեկիր:

Այսօր «Անի» համայնքային անսամբլն ունի ավելի քան քառասուն երգիչներ ու երաժիշտներ, իսկ երգացանկը ընդգրկում է Դոնի հայերի բանահյուսական, գուսանական ստեղծագործությունները, հայկական ազգային երգերը և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունները: Ավարտուն թատերական համար է «Դոնի հայերի հարսանեկան ծեսը», որը ստեղծվել է Գրիգորի Խաթլամաջյանի, Վարսենիկ Բայանի և «Դավուլ-գուռնա» համույթի գեղարվեստական ղեկավար Ասվատուր Դադլդիյանի կողմից: Այն աչքի է ընկնում իր ինքնատիպությամբ, հարսանեկան տարբեր երգերի զուգադրությամբ:

«Դավուլ-գուռնա» համույթը Դոնի հայերի յուրահատուկ երաժշտական խմբավորում է: Անցյալում երաժիշտները դավուլ-գուռնա էին նվագում ուրախ, տխուր, եկեղեցական բոլոր միջոցառումներին: Անսամբլի անդամները նվագում են հնագույն հայկական ազգային գործիքներ: Դավուլը մեծ թմբուկ է, որը նվագում են հատուկ թմբկային փայտիկներով՝ չուբուխով և չոխմարով: Մյուս գործիքներից են գուռնան և բոռոզան: 1900-ական թթ. երաժիշտները երկու անգամ

երկարեցրել են զուռնան և ստացել յուրահատուկ հնչողությամբ մի գործիք, որը նախադեպը չունի ոչ մի ուրիշ հայկական համայնքում: «Ղավուլ-զուռնա» համույթի երգացանկը բազմազան է: Այստեղ կան և՛ հարսանեկան պարային եղանակներ, և՛ դանդաղ-լիրիկական, և՛ հերոսական, և՛ ռուսական ու ռումինական եղանակներ: Ցանկացած երաժշտություն կարելի է վերածել դավուլ-զուռնայի հնչողության:

Մանկական ազգագրական «Ծիծեռնակ» անսամբլը կազմավորվել է 1990 թվականին: Համույթի գեղարվեստական ղեկավարն ու երգավարը համառուսաստանյան երաժշտական միության վաստակավոր գործիչ Վարսենիկ Բայանն է: Համույթի կազմում 4-16 տարեկան երեխաներ են: Երգացանկը հիմնականում կազմված է մանկական ազգային, ծիսական երգերից, ազգային տոների հետ կապված փոքրիկ բեմադրություններից: Համույթի գործունեության նպատակներից մեկը ազգային երգի միջոցով երեխաների մեջ ազգասիրություն, հայրենասիրություն դաստիարակելն է: Երեխաները հնարավորություն ունեն ձանաչելու հայկական ազգագրական ավանդույթները մանուկ հասակից:

«Ջանգեր» համույթի գեղարվեստական ղեկավարն ու դիրիժորը Սանդուխտ Կոչերզիանն է: Համույթի երգացանկի եղանակների մշակումների մեծ մասը նրան են պատկանում: «Ջանգեր» հոգևոր-երաժշտական համայնքային անսամբլը կատարում է եկեղեցական հոգևոր երգեր, դասական, էստրադային երաժշտություն և ջազ: Երգերը կատարվում են ռուսերենով, անգլերենով և հայերենով:

«Հուտ աստղ» երգի և պարի թատրոնը ստեղծվել է 2001 թվականին, գեղարվեստական ղեկավարն է Սոնյա Քիլաֆյանը: Երգի և պարարվեստի միաձուլումը, ժամանակակից էստրադային և ազգային ստեղծագործությունները իրենց յուրահատուկ մշակմամբ համույթի միջոցառումները դարձնում են գունեղ և փայլուն: Երգի և պարի թատրոնի երգացանկը բազմազան է. այն ներառում է հայկական ազգային երգեր ու պարեր, ռուսական և արտասահմանյան կոմպոզիտորների ստեղծագործություններ, աշխարհի տարբեր ազգերի երգեր ու պարեր: «Հուտ աստղ» երգի և պարի թատրոնը նույնպես մասնակցել է տարաբնույթ փառատոների՝ արժանանալով բազմակի դափնիների: Թատրոնը հյուրախաղերով հանդես է եկել Սոչիում, Մոսկվայում, Ֆրանսիայում (2004 և 2005 թթ.), Կանադայում (2010 թ.) և այլուր:

«Աղբյուր» վոկալ-գործիքային անսամբլը ստեղծվել է Մյասնիկյանի շրջանի մշակույթի տանը դեռևս 1973 թվականին: Գեղարվեստական ղեկավարը Մելքոն Ջրեյանն է: Ի սկզբանե համույթը գրավել է երիտասարդության ուշադրությունը. մշակույթի տան ոչ մի միջոցառում չէր անցնում առանց «Աղբյուր» վոկալ-գործիքային անսամբլի մասնակցության: Անսամբլի երգացանկն ընդգրկում է խորհրդային

կոմպոզիտորների ստեղծագործություններ, հայ բանահյուսական մշակումներ, ժամանակակից ռուսական և հայկական երգեր: 1979 թ.-ին համույթը հյուրախաղերով հանդես է եկել միության հյուսիսային քաղաքներում, Բուլղարիայում: Մեծ վարպետություն ցուցաբերելու և բազմաթիվ հաջողություններ գրանցելու շնորհիվ «Աղբյուր» անսամբլը ստացել է «Ազգային» պատվանունը:

«Արաքս» պարային համույթը հիմնվել է 2009 թվականին, գեղարվեստական ղեկավարն է Ալեքսանդր Կիրկիսյանը: Համույթը կատարում է Կովկասյան ազգերի պարեր, առավելապես՝ հայկական ազգային պարեր: «Արաքս» համույթի նպատակն է ազգային պարարվեստը հանրաճանաչ դարձնելը ոչ միայն Մյասնիկյանի շրջանում, այլև շրջանից դուրս: «Արաքս»-ի կատարողները համառուսաստանյան փառատոնների դափնեկիր են:

Մյասնիկյանի շրջանի ինքնավար դրամատիկական թատրոնը վել է 1911 թվականին: Թատրոնի առաջին բեմադրությունը եղել է Գ. Սունդուկյանի «Պեպո» թատերգությունը: Հիմնականում բեմադրվում էին հայկական դասական գրականության երկեր՝ «Չախուկ», «Նամուս», «Գիքոր», «Չար ոգի», «Անուշ» և այլն: Շրջանի թատրոնը գործել է նույնիսկ Հայրենական մեծ պատերազմի դժվարին տարիներին:

1940 թ.-ից սկսում է թատրոնի ակտիվ գործունեության շրջանը: Հաջորդաբար բեմադրվում են հայերենով և ռուսերենով տարբեր երկեր՝ «Նենգություն և սեր», «Պաղտասար ախպար» «Խորթ որդի», «Ճշմարտություն», «Ավագակի ընտանիքը» և այլն: Մյասնիկյանի շրջանի ազգային դրամատիկական թատրոնի յուրահատկություններից մեկը ներկայացումների երկլեզվությունն է: 1968 թվականին Մյասնիկյանի շրջանի Դրամատիկական թատրոնին շնորհվում է «Ազգային» տիտղոսը, ինչից հետո թատրոնի գործունեությունը աշխուժանում է՝ գրավելով ոչ միայն հանդիսատեսի, այլև գրաքննադատների և մամուլի ուշադրությունը: Ազգային թատրոնը ներկայում ունի քսանչորս դերասան, որոնք արժանացել են տարբեր դափնիների, նաև նկարահանվել են մի շարք գեղարվեստական ֆիլմերում:

Մյասնիկյանի շրջանի Մարտիրոս Սարյանի անվան մանկական արվեստի դպրոցում գործում են երաժշտական, պարային և գեղարվեստի բաժիններ: Չկալովո գյուղում գործում է Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանը, այստեղ է նա անցկացրել իր մանկությունը: Մշակութային կարևոր օջախներից է շրջանային Կենտրոնական գրադարանը, որն իր պատմաազգագրական գործունեությամբ դարձել է տարբեր ազգության մարդկանց շփման կենտրոն:

Մշակույթի զարգացման մեջ իր ավանդն է ներդրել Ռ. Պատկանյանի անվան գրական ստուդիան, որն ստեղծվել է 1990 թ. ազգագրագետ, բանաստեղծ և ուսուցիչ Ղևոնդ Քրիստոստուրյանի և մանկավարժական աշխատանքի վետերան Ահարոն Քիլաֆյանի

ջանքերով: Ստուդիան միավորում է Ռոստովի բանաստեղծներին, ակնարկագիրներին, թղթակիցներին, բանահավաքներին: Գրական ստուդիայի անդամների ստեղծագործությունները ամփոփվել են վերջին տարիներին հրատարակված մի քանի ժողովածուներում:

1997 թվականից շրջանում գործում է «Կյանք» հեռուստակայանը, որը հաղորդումներ է տալիս հայերենով և ռուսերենով:

Շրջանում գործում է երեք թանգարան՝ Չալթրրի պատմաագագրական թանգարանը (1992 թ.), Ղրիմ գյուղի թանգարանը (1980 թ.), որոնք ներկայացնում են Ղրիմի հայկական բնակավայրի մոտ 240-ամյա պատմությունը, նաև «Տանախս» արգելավայր-թանգարանը: Մյասնիկյանի շրջանի պատմաագագրական թանգարանը պատմում է հայերի գաղթի մասին Ղրիմի թերակղզուց Ղրիմ ասիեր: Թանգարանի ցուցահանդեսը ներկայացնում է Ղրիմի ասիերում կազմված հայկական գաղութների կյանքը: Պատմաագագրական թանգարանի բացման պաշտոնական թվականը համարվում է 1992 թ. ապրիլի 24-ը, սակայն ցուցանմուշներ սկսել են հավաքել դեռևս 1988 թվականից տեղի ազգագրագետների՝ Մկրտիչ Փուղեյանի, Ավետիք Խուրդայանի, Գևորգ Լյուլեջիյանի նախաձեռնությամբ: Հետագայում Գևորգ Լյուլեջիյանը դարձավ թանգարանի առաջին տնօրենը: Թանգարանի ցուցանմուշները հետաքրքիր ու յուրահատուկ են՝ հին կահ ու կարասի, աշխատանքային գործիքներ, տնային սպասք, 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի ձեռագործ իրեր: Ռեչարժան են Ղրիմից բերված իրերը:

Թանգարանի ցուցահանդեսի զանձերից են հանրաճանաչ հայագի նկարիչ, Մյասնիկյանի շրջանից սերող Սեյրան Խաթլամաջյանի նկարները, Ռուսաստանի նկարիչների միության անդամների՝ Խաչատուր Գրենադյոռովի և Վալերի Բուրիմովի նկարները, համագյուղացիներ Թորոս Բառաշյանի և Սարգիս Քիլաֆյանի և այլոց նկարները: Թանգարանի բազմաթիվ ցուցանմուշները այցելուներին ծանոթացնում են շրջանի մեծանուն հասարակական գործիչների, գրողների, երաժիշտների, ազգագրագետների, բանահավաքների կյանքին և գործունեությանը:

Թանգարանին կից ստեղծվել է «Ծաղկեփունջ» ազգային խմբակը, որի մասնակիցները հավաքում և վերականգնում են Ղրիմի հայերի ժողովրդական բանահյուսությունը, ուսումնասիրում են երիտասարդ սերնդի գործունեությունը: Գյուղի ազգային տոները նշվում են խմբակի երգերի ուղեկցությամբ: Ազգագրական խմբակի միջոցառումներն անցկացվում են թանգարանի ազգային մոտիվներով ձևավորված սենյակներից մեկում և թանգարանի դիմաց գտնվող հայկական փոփ մոտ, որտեղ նրանք երգեր են երգում և հաց են թխում:

Շրջանի տարածքում է գտնվում նաև հանրահայտ «Տանախս» արգելավայր-թանգարանը: Այդ հինավուրց քաղաքի պեղումներն



սկսվել են դեռևս 19-րդ դարի կեսերին: Ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են III–IV դդ.-ին վերաբերող նյութեր, որոնք նախկինում հայտնի չեն եղել հնագիտական շրջանակներին: 1959 թ.-ից քաղաքը և գերեզմանոցը հայտարարված են արգելավայր: 1961 թ. այստեղ բացվել է «Տանախ» հնագիտական արգելավայր-թանգարանը, տեղակայվել են մի շարք ցուցանմուշներ, քաղաքի արդեն ուսումնասիրված մասում վերականգնվել են անտիկ շրջանի կամուրջը, տարբեր շինություններ, մարտական մեքենաներ: Արգելավայրն իր ցուցանմուշներով մի յուրօրինակ թանգարան է բաց երկնքի տակ:

**3. Բարբառը:** Դրիմից եկած լինելով՝ Չալթըրի և շրջակայքի հայերը պահպանել են իրենց բարբառը և մեր օրերում էլ գործածում են այն առօրյա խոսքում: Հայերենագիտության մեջ այն հայտնի է Դրիմի կամ Նոր Նախիջևանի բարբառ անվանումներով, որի շրջանակի մեջ մտնում է մեր ուսումնասիրած խոսվածքը: Ըստ Հրաչյա Աճառյանի դասակարգման՝ այն պատկանում է հայերենի բարբառների արևմտյան ԿԸ ճյուղին: Նոր Նախիջևանի բարբառը, չնայած որ մեկ ամբողջություն է կազմում, իր մեջ ունի ինչ-ինչ տարբերակներ: Սրա պատճառն այն է, որ գաղթականությունն իր մեջ ներառել է տարբեր վայրերից եկած հայերի:

Մենք հնարավորություն ենք ունեցել ուսումնասիրելու Չալթըրի և շրջակա բնակավայրերի հայերի խոսվածքը, հնարավորինս քաղել բարբառային տվյալները, ունենք նաև ծայնագրված նյութեր: Փորձել ենք արձանագրել լեզվական իրողությունները՝ Նոր Նախիջևանի բարբառի տվյալները համեմատելով շրջակա գյուղերի խոսվածքների հետ: Այսինքն՝ փորձել ենք արձանագրել բարբառի մերօրյա լեզվավիճակը, 19-րդ դարից հետո կրած հիմնական, համակարգային փոփոխությունները:

Համեմատության համար հիմք ենք ընդունել Հ. Աճառյանի «Քննութիւն Նոր-Նախիջևանի (Խրիմի) բարբառի» և Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատությունները<sup>270</sup>:

Ա) **Հնչյունական առանձնահատկություններ:** Ըստ Հ. Աճառյանի տվյալների՝ բառասկզբի Բ ձայնեղ հնչյունը Մեծ ու Փոքր Սալա գյուղերում պահպանվում է, իսկ Չալթըրի և Թոփթիի խոսվածքներում դառնում է ձայնեղ Բ' (ձայնեղ-շնչեղ) կամ խուլ Պ, ինչպես՝ *բերան-բ'երան, պէրան, բույն-բ'ուն, պուն* և այլն: Ինչպես Բ-ի, այնպես էլ մյուս ձայնեղ պայթականների (բ, գ, դ, ձ, ջ) և կիսաշփականների պարագայում Հ. Աճառյանը փաստում է այս բաղաձայնների շնչեղ-ձայնեղացումը: Համաձայն Գ. Ջահուկյանի վերոնշյալ գրքի՝ Չալթըրի խոսվածքում առկա է բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսա-

<sup>270</sup> Հ. Աճառյան, Քննութիւն Նոր-Նախիջևանի (Խրիմի) բարբառի, Ե., 1925: Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:

շփականների շնչեղ-ծայնեղություն (բ, գ, դ, ձ, ջ >բ', գ', դ', ձ', ջ'), որը սկզբնավորման եզրին է: Քննությունը սակայն ցույց է տալիս, որ հնչյունական այս երևույթը հետագա զարգացում չի ստացել, և շնչեղ-ծանեղներն այժմ բացակայում են Չալթրրի խոսվածքից, իսկ Մեծ և Փոքր Սալա գյուղերում Բ հնչյունի ծայնեղ արտասանությունը որոշակիորեն պահպանվել է:

Բառասկզբի ծայնեղ պայթականների և կիսաշփականների խլությունը (բ, գ, դ, ձ, ջ >պ, կ, տ, ծ, ճ` բարև>պարև,) Գ. Ջահուկյանը համարում է վերացման եզրին գտնվող իրողություն, սակայն այն դեռևս պահպանվում է և այժմ տարածված է:

Բառասկզբի խուլ պայթականների և կիսաշփականների ծայնեղացման (պ, կ, տ, ծ, ճ >բ, գ, դ, ձ, ջ) երևույթն այնքան է տարածվել, որ այժմ նաև բառամիջի և բառավերջի դիրքերում է հանդիպում, ինչպես՝ *ուտել>ուդել, սիրտ>սիրդ, մածուն>մածուն, գործ>կործ, ծալել>ծալել, կոճակ-գոջագ, հավկիթ>հազվիթ*<sup>271</sup>, *կարճ>զարջ*: Ընդ որում Չալթրրի խոսվածքում Պ, Կ, Տ, Ծ, Ը, վերածվում են Բ, Գ, Դ, Չ, Ջ, բայց Թոփթի խոսվածքում այս հնչյունափոխությունը տեղի չի ունենում: Օրինակ՝ Չալթրրի խոսվածքով *կայծակ* բառը հնչում է *գայծագ* ձևով, իսկ Թոփթի խոսվածքով՝ *կածակ*:

Հնչյունական հատկանիշներից նշենք ևս մի քանիսը: Չալթրրի խոսվածքում հանդիպում են նաև Ծ>Ջ և Ս>Ջ հնչյունափոխության հազվադեպ կիրառություններ՝ *արծաթ>արզաթ, սուք>զուք*: ՆԳՆ, ՆԿՆ հնչյունակապակցությունների դիմաց ՅՆ-ի առկայությունը պահպանվել է՝ *կանգնել-գայնել, ընկնել-ըյնել* և այլն: Բառասկզբում՝ Ո-ից առաջ Հ-ի փոխարեն շրթնային շփականները պահպանվել են միայն որոշ բառերում իբրև բացառություն՝ *հող>ֆող, հորթ>ֆոռթ*: Մի շարք բառերում պահպանվել է Բ>Շ հնչյունափոխություն՝ *մարդ>մաշտ, կարդալ>կաշտալ, բուրդ>պուշտ*:

Միավանկ բառերի սկզբնային Ե-ից առաջ նկատելի է եղել Յ-ի հավելում (Ե>ՅԷ), սակայն հնչյունափոխական այս երևույթը այլևս չի հանդիպում Չալթրրի խոսվածքում՝ *ե'կ>էգի'ր կամ արի', եսի-էսի*: Փոխարենը բառամիջում (հիմնականում Բ-ին նախորդող դեպքերում) Ե-ից առաջ լսվում է թույլ Ը՝ *երք>ճերքի, գնայինք>ճերթայինք, մեր>մ՞եր*: Չալթրրի և Թոփթի խոսվածքներում բառի աճման դեպքում հիմնականում պահպանվում են ծայնավորները, և հնչյունափոխություն տեղի չի ունենում, օրինակ՝ *ծուկի, մուկի, թութի, սիրդի, ջուրերը, սերի* և այլն:

<sup>271</sup>Հավկիթը գործածվում է նաև հավի գիթ ձևով: Հավանաբար սրա համաբանությամբ էլ կովի կաթը դառնում է կովի գիթ: Աճառյանը նշում է, որ կա թ բառի դիմաց կա գաթ, գաթի ձևերը, սակայն գիթ ձևը չի հիշատակում:

Բ) **Քերականական հատկանիշներ:** Ձևաբանությունից առանձնացրել ենք մի քանի կարևոր կետեր: Է(ն)-ով բացառականը (է, էն, ան) պահպանվել է, օրինակ՝ *ծովեն=ծովից, իդա դեդեն=այդտեղից, գարիեն=գարուց* և այլն: Պահպանվել է նաև բացառականի և գործիականի ձևերի Մ մասնիկը, օրինակ՝ *եղբայր, քույր և աղա* բառերը Չալթրրի խոսվածքում բացառական հոլովով լինում են *ախպորիմեն, քուրոջմեն, աղըմեն/աղայիմեն*, գործիականով՝ *ախպորիմով, քուրոջմով, աղայիմով*: Դերանունների թեք հոլովածներում Ի-ի առկայությունը պահպանվել է՝ *ինծ>ինծի, քեզ>քեզի, մեզ-մեզի* և այլն: Հանդիպում է ՄԱՆ մասնիկով դերբայ՝ *ելման, լալման, վառման*, սակայն այդ մասնիկով ներկայի ձևեր (*ելման եմ, գալման եմ*) այժմ չեն կազմվում Չալթրրի խոսվածքում:

Հնչյունական, քերականական, բառապաշարային նյութից սահմանափակ օրինակներ ենք ներկայացնում, մեր քարտարանում տվյալներն առավել բազմաշերտ են, որոնք բանասիրական քննության ոլորտից են, և հեղինակները նպատակ ունեն ամփոփ ձևով ներկայացնել բարբառին նվիրված քննության մեջ:

Իսկ ընդհանուր առմամբ պետք է փաստել, որ Նոր Նախիջևանի անունով հայտնի հայերենի բարբառը կենսունակ է մեր օրերում, խոսվում է Չալթրրում և շրջակա գյուղերում, և այն Եղեռնից հետո ուղղակիորեն ոչնչացված արևմտահայ բարբառախմբի մի եզակի նմուշ է ներկայացնում Մշո, Ալաշկերտ, Կարնո (գերագանցապես խոսում են Շիրակում և Ջավախքում) և փոքրիկ կղզյակներով պահպանված մի քանի այլ խոսվածքների հետ մեկտեղ:

**4. Հայտնի հայերը:** Մյասնիկյանի շրջանն իր անվանումը ստացել է հայտնի գործիչ Ա. Մյասնիկյանի պատվին, որը ծնունդով Նոր Նախիջևանից էր: Իր գոյության ընթացքում համայնքը (Նոր Նախիջևանը և շրջակա հայաբնակ գյուղերը) տվել է մեկ տասնյակից ավելի անվանի ու երևելի գործիչներ մշակույթի, քաղաքականության գրեթե բոլոր ոլորտներում:

Ստորև ներկայացնում ենք Նոր Նախիջևանից և շրջակայքից սերած առավել հայտնի գործիչների: Խիստ հանրահայտ են նրանք, ուստի բավարարվում ենք միայն թվարկելով:

- Հարություն Ալամդարյան (1795-1834),
- Միքայել Նալբանդյան (1829-1866),
- Ռաֆայել Պատկանյան (1830-1892),
- Սիմոն Վրացյան (1882-1969),
- Գևորգ Դ Զորեքչյան (Ամենայն հայոց կաթողիկոս, 1864-1955)
- Մարտիրոս Սարյան (1880-1972),
- Գրիգոր Շլոյան (նկարիչ, 1900-1985),
- Սարգիս Սարյան (գրականագետ, 1917-1962),

Մարկ Գրիգորյան (ճարտարապետ, 1900–1978),  
Ալեքսեյ Ջիվելեզով (պատմաբան, արվեստաբան, 1875–1952),  
Սեյրան Խաթալամաջյան (նկարիչ, 1937–1994) և այլն:

Մտավորականների, գիտնականների այս շարքը շատ երկար կարելի է շարունակել:

Կարծում ենք՝ պատմական, մշակութային, բարբառային մեր այս ակնարկը և գործիչների թվարկումը ավելի քան բավարար են համոզվելու համար, որ հայ ժողովրդի մի բեկորը, ապաստանած Ռուսաստանի Ղաշնության հարավային մարզերում, շարունակել է ստեղծագործ իր ուղին և մեր օրերում էլ ռուսական հյուրընկալ հողում ապրում և արարում է, այդ թվում՝ մշակութային, հոգևոր-եկեղեցական կյանքում:

**Норайр Погосян, Мариана Ботцинян (РА), *Диалект и культура Армян Чалтыря и окружения.*** Армяне поселились в Чалтыре в 1779 г. (также в Мец Сала, Султан Сала, Топти, Нисвета, нынешнее название - Несветай), в Мясниковском районе Ростовской области, РФ. Они переселились из Крыма по приказу Екатерины Великой. Статья касается истории армянского народа, культуры в настоящее время, а также диалектов армян разных поселений. После переселения на Дон, короткое время спустя, армяне занялись продвижением производственных дел, развитием торговли, школ и церквей. По некоторым данным в 1810 году там уже жили около 11000 армян. В настоящее время в Чалтыре и окружающих его населенных пунктах армянский народ живет своей национальной активной жизнью. Существует много культурных групп: "Ани", "Давул-Зурна", "Цицернак", "Зангер"-музыкальные группы, театр музыки и танца "Акбюр", "Усо арагаст" и "Аракс", "Асса", "Шанс", "Айоц Ахчикнер" и другие танцевальные группы. Драматический театр Мясникяна работает с 1911 года. Армянский народ всегда хранит свой старый диалект. Интерес представляет тот факт, что он принадлежит к западной ветви армянских диалектов, которые почти полностью исчезли после Геноцида армян. Авторы данной статьи фактами показывают, что Чалтырь и окружающие армянские деревни являются одним из жизнеспособным армянский колонией Российской Федерации даже в наши дни.

**Norayr Poghosyan, Mariana Botsinyan (RA), *Dialect and Culture of Armenians of Chaltir and Surroundings*** Armenians in 1779 settled in Chaltr (also in Mets Sala, Sultan Sala, Nisveta, now Nesvetay, Topiti), which are in the region of Rostov of Myasnikyan region of Russian

Federation. They came here from Ghrim under the control of the Great Catherine. This issue is about the history of Armenians, about the culture in nowadays, about the dialect of Armenians of those settlements. Armenians settled in Don after sometime they developed manufacturing affairs, churches, schools soon one settled by them. In 1810 there lived 11000 Armenians. Nowadays Armenians live here and in other settlements nearby Chaltr with national dynamic live. There are many cultural groups such us: "Any" "Davel-Zurna", "Tsitsernak", "Zanger", musical groups "Aghbyur", the theatre of music and dance "Huso Astgh", "Araqs", "Assa", "Chance", "Hayots aghjikner" etc. Dramatic theatre of Myasnikyan works from 1911. Armenians always kept their old dialect. It's interesting because of belongs to the western branch of Armenians' dialect which is lost after Genocide.

The authors facted that Chaltr and Armenian village nearby Chaltr are good colony of Russian Federation.